ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2016 թվականի **թիվ 78** քաղ. Մոսկվա

Բնական ածխաջրածնային գազի եւ ուղեկից նավթային գազի մաքրման համար նախատեսված սեպարատորներն ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի դասակարգելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Բնական ածխաջրածնային գազի մաքրման համար նախատեսված սեպարատորները, որոնք կիրառվում են նավթ ու գազ արդյունահանող եւ (կամ) նավթ ու գազ վերամշակող արդյունաբերության մեջ, եւ որոնք նախատեսված են բնական ածխաջրածնային գազը մեխանիկական խառնուկներից, գազային կոնդենսատից, կաթիլային, մանրադիսպերս, աերոզոլային ջրից, հիդրատների գոյացման ինհիբիտորներից եւ մյուս խառնուկներից մաքրելու համար, Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 1-ին եւ 6-րդ մեկնաբանության հիմնական կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8421 39 800 7 ստորաենթադիրքում:

2. Ուղեկից նավթային գազի մաքրման համար նախատեսված սեպարատորները, որոնք կիրառվում են նավթ ու գազ արդյունահանող եւ նավթ ու գազ վերամշակող արդյունաբերության մեջ, եւ որոնք նախատեսված են բնական ուղեկից նավթային գազը մեխանիկական խառնուկներից, գազային կոնդենսատից, կաթիլային, մանրադիսպերս, աերոզոլային ջրից, հիդրատների գոյացման ինհիբիտորներից եւ մյուս խառնուկներից մաքրելու համար, Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 1-ին եւ 6-րդ մեկնաբանության հիմնական կանոններին համապատասխան դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8421 39 800 2 ստորաենթադիրքում:

3. Թե՛ բնական ածխաջրածնային գազի, թե՛ ուղեկից նավթային գազի մաքրման համար նախատեսված սեպարատորները, որոնք կիրառվում են նավթ ու գազ արդյունահանող եւ (կամ) նավթ ու գազ վերամշակող արդյունաբերության մեջ, եւ որոնք նախատեսված են գազերը մեխանիկական խառնուկներից, գազային կոնդենսատից, կաթիլային, մանրադիսպերս, աերոզոլային ջրից, հիդրատների գոյացման ինհիբիտորներից եւ մյուս խառնուկներից մաքրելու համար, Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 1-ին եւ 6-րդ մեկնաբանության հիմնական կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8421 39 800 7 ստորաենթադիրքում:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան